

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 7

ԳՊՄԻ պատմաբանասիրական ֆակուլտետի խորհրդի 16. 02. 2015թ. նիստի՝

մասնակցությամբ խորհրդի 15 անդամների,

նախագահությամբ դեկան Ս.Հայրապետյանի

**ՕՐԱԿԱՐԳ** - 1. Պատմաբանասիրական ֆակուլտետի առկա համակարգի ուսանողների 2014-2015 ուստարվա երկրորդ կիսամյակի կուրսային աշխատանքների հաստատում ըստ ուսանողների եւ դասախոսների

2. 2014-2015 ուստարվա առաջին կիսամյակի արդյունքների ամփոփումն ըստ առաջադիմության /առաջադիմող, փորձաշրջանում գտնվող, հեռացման ենթակա/

3. Որակի ապահովման ֆակուլտետային պատասխանատուի կիսամյակային հաշվետվություն

4. Ընթացիկ հարցեր

**ԼՍԵՑԻՆ** - Մասնագիտական ամբիոնների վարիչների հաղորդումները ըստ ուսանողների եւ դասախոսների ֆակուլտետի առկա համակարգի 2014-2015 ուստարվա երկրորդ կիսամյակի կուրսային աշխատանքների հաստատման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Գ.Խաչիկյան, Մ.Խաչատրյան, Ե.Վարդանյան

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Հաստատել մասնագիտական ամբիոնների կողմից ըստ ուսանողների եւ դասախոսների ֆակուլտետի առկա համակարգի 2014-2015 ուստարվա երկրորդ կիսամյակի կուրսային աշխատանքների թեմատիկան:

**ԼՍԵՑԻՆ** -Դեկան Ս.Հայրապետյանի հաղորդումը 2014-2015 ուստարվա առաջին կիսամյակի ըստ առաջադիմության ֆակուլտետի ուսանողների արդյունքների /առաջադիմող, փորձաշրջանում գտնվող, հեռացման ենթակա/ մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Ս.Կուրազյան, Գ.Խաչիկյան, Ա.Հովհաննիսյան, Մ.Խաչատրյան, Ե.Վարդանյան

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Հաստատել 2014-2015 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանում ֆակուլտետի ուսանողների հետևյալ արդյունքները.

1. առաջադիմել են ֆակուլտետի 244 ուսանողներից 151-ը, այսինքն՝ ուսանողների 65 տոկոսը
2. փորձաշրջանում են գտնվում ֆակուլտետի 93 ուսանողներ , այսինքն՝ առկա համակարգի ուսանողների 35 տոկոսը,
3. քննաշրջանի լուծարքի ժամկետներն են. 1-ին փուլը՝ 16-23 փետրվարի, երկրորդ փուլը՝ 24 փետրվարի - 2 մարտի, որի արդյունքներով պարզ կլինի ինչպես մինչև 12 կրեդիտ վճարովի պարտքերով ուսումը շարունակող, այնպես էլ՝ հեռացվող ուսանողների քանակը:

**ԼՍԵՑԻՆ** - Որակի ապահովման ֆակուլտետային պատասխանատու Գ.Համբարյանի կիսամյակային հաշվետվությունը

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Հ.Խորիկյան, Ա.Հովհաննիսյան, Ս.Հայրապետյան

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Ուսման որակի ապահովման ուղղությամբ ֆակուլտետում կատարվող աշխատանքների մասին որակի ֆակուլտետային պատասխանատու Գ.Համբարյանի կիսամյակային հաշվետվությունը գնահատել բավարար:

**ԼՍԵՑԻՆ** - Դեկան Ս.Հայրապետյանի հաղորդումը ֆակուլտետում առկա եւ հեռակա ուսուցման 2014-2015 ուստարվա ձմեռային քննաշրջանի անցկացման ընթացքում ստուգումներով նկատված թերությունների վերացման մասին

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Գ.Համբարյան, Ս.Պետրոսյան, Ե.Վարդանյան, Գ.Խաչիկյան, Մ.Խաչատրյան,

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Պատմաբանասիրական ֆակուլտետում առկա եւ հեռակա ուսուցման 2014-2015 ուստարվա ձմեռային քննաշրջանի անցկացման ընթացքում ստուգումներով նկատված բացթողումները գերազանցապես տեխնիկական բնույթի են : Դրանք վերաբերում են որոշ դասախոսների

կողմից գրավոր աշխատանքների ստուգման ոչ պատշաճ ձևին, ըստ հարցերի ստացած միավորների գումարման ժամանակ թույլ տրված անճշտություններին, որոշ դասախոսների՝ ամփոփիչ ստուգումներից ուշացման փոստերին, հարցաշարերը ուսանողներին ուշ տրամադրելուն, որոշ հարցաշարերի անհարկի բարդությանը, հատկապես հեռակա կուրսերում ամփոփիչ ստուգումներին ուսանողների անբավարար հաճախումներին եւ այլն:

Պահանջվեց մասնագիտական ամբիոնների վարիչներից՝ ավելի ուշադիր ու հետեւողական լինել նկատված թերությունների ու բացթողումների վերացման գործում, ինչը կարելու է նշանակություն ունի ուսման որակի խթանման, ուսումնական գործընթացի կատարելագործման տեսակետից:

**ԼՍԵՑԻՆ** - Ֆակուլտետի առկա համակարգի 2014-2015 ուստարվա ձմեռային քննաշրջանի լուծարքի կազմակերպման մասին դեկան Ս.Հայրապետյանի հաղորդումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Ա.Հովհաննիսյան, Ս.Կուրազյան, Ե.Վարդանյան, Գ.Խաչիկյան, Ն.Ստեփանյան

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Առկա ուսուցման համակարգի համար 2014-2015 ուստարվա ձմեռային քննաշրջանի լուծարքի ժամկետներ սահմանել. 1-ին փուլը՝ 16-23 փետրվարի, երկրորդ փուլը՝ 24 փետրվարի - 2 մարտի:

**ԼՍԵՑԻՆ** - Դեկան Ս.Հայրապետյանի հաղորդումը ուսման վարձի մասնակի փոխհատուցման /զեղջ/ դիմումների ընդունման կարգում փոփոխություն կատարելու մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Ա.Հովհաննիսյան, Մ.Խաչատրյան, Ս.Պետրոսյան

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Միջնորդել ռեկտորատին՝ ուսման վարձի մասնակի փոխհատուցման /զեղջ/ դիմումների ընդունման կարգում կատարելու փոփոխություններ.

ա. ուսանողի առաջադիմության ՄՈԳ-ը հաշվարկել առանց ոչ մասնագիտական առարկաների կիսամյակային գնահատականների:

բ. ուսման վարձի մասնակի փոխհատուցման /զեղչ/ դիմումներ ընդունել նաև ոչ մասնագիտական առարկաներից կիսամյակի ընթացքում անբավարար գնահատական ստացած եւ լուծարքային շրջանում այդ ակադեմիական պարտքերը մարած ուսանողներից:

**ԼՄԵՑԻՆ** - Պատմաբանասիրական ֆակուլտետի հեռակա 5-րդ կուրսերի 2-րդ կիսամյակի մանկավարժական պրակտիկայի կազմակերպման մասին դեկան Ս.Հայրապետյանի հաղորդումը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Մ.Խաչատրյան, Ե.Վարդանյան, Ն.Խաչատրյան, Ա.Հովհաննիսյան

**ՈՐՈՇԵՑԻՆ** - 1. Պատմաբանասիրական ֆակուլտետի հեռակա 5-րդ կուրսերի 2-րդ կիսամյակի մանկավարժական պրակտիկայի կազմակերպման մասին դեկան Ս.Հայրապետյանի հաղորդումը ընդունել ի գիտություն:

2. Նկատի ունենալով, որ ֆակուլտետի հեռակա 5-րդ կուրսերից ընդհանուր առմամբ 27 ուսանողի մանկավարժական պրակտիկան ռեկտորատի թույլտվությամբ իրականացվելու է նրանց բնակավայրի կամ աշխատավայրի դպրոցում, պահանջել մասնագիտական ամբիոնների վարիչներից մանկ. պրակտիկայի բաժնի հետ միասին հատուկ հսկողության տակ պահել այդ վայրերում պրակտիկայի անցկացումը, որը լրացուցիչ դժվարություններ է ստեղծում այդ գործում:

3. Նկատի ունենալով, որ մի քանի ուսանողներ առ այսօր չեն ներկայացել պրակտիկայի վայրերի բաշխմանը, նրանց մանկավարժական պրակտիկայի կազմակերպման հարցին անդրադառնալ ավելի ուշ:

4. Պրակտիկայի արդյունքները քննարկման առարկա դարձնել խորհրդի հաջորդ նիստում:

**խորհրդի նախագահ՝**

**Ֆակուլտետի դեկան**

**նիստի քարտուղար**

**Ս. Հայրապետյան**

**Է. Չոբանյան**